

# ՊԱԼԻԱՏԻՎ ԽՆԱՄՔ ‹ԵՎ› ՀՈՍՊԻՍԱՅԻՆ ԽՆԱՄՔ

## ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

**Պալիատիվ խնամք**

Պալիատիվ խնամքն ապահովում է բուժում, որը բարելավում է հարմարավետություն և բարվոքում մարդու կյանքի որակը:

- Տրամադրվում է բուժման հետ միաժամանակ
- Միշտ չէ, որ կապված է մահվան հետ կամ հանգեցնում է մահվան
- Կենտրոնանում է բուժման և հարմարավետության վրա
- Ոչ միշտ է պալիատիվ խնամքը համարվում հոսպիսային խնամք

**Հոսպիսային խնամք**

Հոսպիսը տրամադրում է աջակցություն և խնամք անբուժելի հիվանդության վերջին փուլում գտնվող անձանց, որպեսզի նրանք կարողանան ինարավորինս լիարժեք և հարմարավետ ապրել:

- Տեղի է ունենում ակտիվ բուժումից հետո
- Տանում է դեպի մահ
- Աջակցություն և հարմարավետություն է ապահովում
- Հոսպիսային ամբողջ խնամքը պալիատիվ խնամք է

### ՄԱՍՆԱԿՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

**Պալիատիվ խնամք**

- Հիվանդներ բարդացած և կյանքին սպառնացող հիվանդության ցանկացած փուլում՝ առանց ժամանակային սահմանափակման
- Հիվանդության ողջ ընթացքում, ներառյալ ակտիվ բուժման փուլը

**Հոսպիսային խնամք**

- Կյանքի վեց ամիս կամ ավելի քիչ կանխատեսմամբ հիվանդներ, եթե հիվանդությունը շարունակի իր բնականոն ընթացքը
- Երբ բուժումը ցանկալի չէ կամ տաբերակ չէ

### ԽՆԱՄՔՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

**Պալիատիվ խնամք**

Կարող է ներառել

- Պալիատիվ խնամքի մեջ մասնագիտացած բժիշկ
- Բուժքույր
- Օգնական
- Դիետոլոգ
- Սոցիալական աշխատող
- Դեղագետ
- Հոգևոր խորհրդատու
- Թերապևտ
- Կամավոր

**Հոսպիսային խնամք**

Կարող է ներառել

- Պալիատիվ խնամքի մեջ մասնագիտացած բժիշկ
- Բուժքույր
- Օգնական
- Դիետոլոգ
- Սոցիալական աշխատող
- Վշտի խորհրդական
- Դեղագետ
- Հոգևոր խորհրդատու
- Թերապևտ
- Կամավոր

### ՏԵՂԱԿԱՅՈՒՄ

**Պալիատիվ խնամք**

Պալիատիվ խնամքը հաճախ իրականացվում է այնպիսի հաստատությունում, ինչպիսին հիվանդանոցն է: Այն կարող է նաև իրականացվել տանը, կլինիկայում կամ ծերանոցում:

**Հոսպիսային խնամք**

Հոսպիսը ծառայություն է, որը տրամադրվում է հիվանդի տանը, որտեղ էլ որ նա բնակվի: Սա կարող է ներառել մասնավոր տուն, մասնագիտացված բուժքույրական հաստատություն կամ բնակելի հոսպիս:

### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Պալիատիվ խնամք**

Փոխհատուցում հետևյալի համար

- Medicare՝ ապահովագրություն, որը տրամադրվում է Medicare Մաս B-ի ներքո՝ կիրառելի համավճարներով և վճարներով:
- Medicaid՝ապահովագրություն, որը տրամադրվում է ստանդարտ կերպով Medicaid-ի նպաստներով՝ կիրառելի համավճարներով և վճարներով:
- Մասնավոր ապահովագրություն. ծածկույթը կախված է ապահովագրությունից:

**Հոսպիսային խնամք**

Փոխհատուցում հետևյալի համար

- Medicare. անբուժելի հիվանդության հետ կապված ծառայություններն ամբողջությամբ փոխհատուցվում են Medicare-ի հոսպիսային նպաստի մաս A-ով:
- Medicaid. վճարվում է ամբողջությամբ՝ Medicaid-ի հոսպիսային նպաստով:
- Մասնավոր ապահովագրություն. ապահովագրությունների մեծ մասն ամբողջությամբ կամ նվազագույն համավճարներով փոխհատուցում է հոսպիսային ծառայությունները:

## ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովում է ցավից և այլ ախտանիշներից ազատում
- Առաջարկում է աջակցության համակարգ՝ օգնելու հիվանդներին բարելավելու իրենց կյանքի որակը
- Առաջարկում է աջակցության համակարգ՝ օգնելու ընտանիքի անդամներին և խնամակալներին հաղթահարելու հիվանդությունը
- Օգտագործում է թիմային մոտեցում՝ հիվանդների, ընտանիքների և խնամակալների կարիքները հոգալու համար
- Հոգում է հոգեբանական և հոգևոր կարիքները

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan

Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association